Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԳՐԻԳՈՐ ՎԱՆՅԱՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՔԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

425
491.99-5
Ղ-22

Տպարան Ա. ՇԻՐԱԿ Էջմիածնի
1906
(34)

ВОЗВРАТИТЕ КНИГУ НЕ ПОЗЖЕ
обозначенного здесь срока

0 4 MAY 2010

7547

08.08.2013

491.99-5
Ֆ-29
425
118-Կ,Ա

ՖՐԻԴՈՐ ՎԸՆՅԵԸՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1004
Ե-464

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/II-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Տպարան „ՇԻՐԱԿ“ Ալէքսանդրապոլ
1906
(34)

Дозволено Цензурою 22 Ноября 1905 года г. Тифлисъ

ԱՋԴ

Այս ձեռնարկը կազմուած է յատկապէս պետական եւ մեր ծխական դպրոցների համար; ի նկատի է առած վերջին ծրագիրը։

Ուսուցիչների եւ միջնակարգ դպրոցների բարձր դասարանների համար, սրա հետ լոյս կ՚տեսնի «Արեւելահայ լեզուի պատմա-բնական բառականութիւնը», որից եւ ցանկացողը կարող է աւելի ընդարձակ տեղեկութիւններ ստանալ մեր լեզուի բառականութեան մասին։

ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑԵԱՆ

ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ

«Մայր Արարքի ափերով քայլամոլոր գնում եմ»...

«Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր»... «Ունէր նա երկու մատաղահաս ազջիկ»... Սրանցից ամեն մինը բառերով արտայայտուած միտք է և կոչւում է խօսք կամ Նախադասութիւն։

Նախադասութիւնը բաղկանում է մի, կամ մի քանի բառերից, օրինակ. «լուսացաւ». «լեռ, ամպերը եկան ծածկեցին երկինք, ու լուսին աչքս խլեցին»։— Այս բառերը կոչւում են նախադասութեան անդամներ, որ լինում են երկու տեսակ՝ գլխաւոր ու երկրորդական։ Գլխաւորն այն առարկան է, առանց որին նախադասութիւն չի կարելի կազմել և մէկ էլ այն, ինչ որ խօսւում կամ ասւում է այդ առարկայի մասին. օրինակ քաջ Վարդանն ընկաւ Աւարայրի պատերազմում։ Կարող ենք կարճ ասել. «Վարդանն ընկաւ» և դարձեալ միտք կայ. այն ինչ եթէ բաց թողնենք Վարդան կամ ընկաւ բառերը, այլևս նախադասութիւն չի մնում, այլ միայն բառեր։

Առարկան, որի մասին խօսւում է նախադասութեան մէջ, կոչւում է Ենթակայ. Վարդանն՝; այն ինչ որ խօսւում է Ենթակայի մասին, ստորագեալ՝ ընկաւ։

Ենթական գտնելու համար պիտի հարցնենք ով, ինչ. ով ընկաւ. Վարդանը. ինչը կորաւ. մատանին; իսկ ստորագեալը, որ ցոյց է տալիս առարկայի գործողութիւնը կամ դրութիւնը, պատասխանում է հետևեալ հարցերին. ինչ է անում, ինչ է լինում, ինչ է, ինչպիսի է. օրինակ. ինչ է անում Վարդանը—պատերազմում է. ինչպիսի է Վարդանը —քաջ է. ինչ է խնձորենին.—ծառ է. պատերազմում է, քաջ է, ծառ է,—ստորագեալներ են։

Բացի այդ գլխաւոր անդամներից՝ նախադասութեան

միտքը լրացնելու և ընդարձակելու համար լինում են և այլ բառեր, որոնք կոչւում են Երկրորդական անդամներ. օր. Վարդան սպարապետի քաջ զօրքը Աւարայր դաշտում կռւում է անձնուիրութեամբ.—Այստեղ Վարդան սպարապետ, քաջ, Աւարայր, անձնուիրութեամբ. նախադասութեան երկրորդական անդամներ են, որոնցից սոնք վերաբերում են առարկային և որոշում ու պարզում են նրան, սոնք վերաբերում են գործողութեանը։ Մնացեալն էլ ուղղակի վերաբերում է ու պարզում հենց երկրորդական անդամներին։

Առարկային վերաբերուող բառերը կոչւում են որոշող բառեր. ինչպիսի զօրք.—քաջ զօրք. քաջ որոշող է, իսկ զօրքը—որոշեալ. ում զօրքը, Վարդանի, Վարդան նոյնպէս որոշում է զօրքին։ Հարկաւոր է նոյնպէս իմանալ թէ ով էր ինքը վարդանը.—նա սպարապետ էր, սպարապետը որոշիչ է Վարդանին, իսկ Վարդան որոշեալ է սպարապետի։ Որոշող բառերից իմանում ենք թէ քանի հատ է առարկան, քանի երրորդն է, ոմն է, որն է, ինչպիսի է։

Այն բառերը, որոնք լրացնում են ստորոգեալի միտքը, կոչւում են լրացուցիչ։ Ամպերը եկան, ծածկեցին լուսին. (լուսնին). գիւղացիք խոտը հարում են զերանդով։ Հայը ձեռի Վարդանին, թուրը ձեռի Վարդանին։ Ձուշան շուտով ղէմքդ ծածկէ.—Այստեղ լուսին, խոտը, զերանդով Վարդանին, լրացուցիչներ են, որովհետև լրացնում են նախադասութեան միտքը, ցոյց տալով, թէ ստորոգեալի ոյժը որի վրայ, կամ որի միջով է անցնում։ Լրացուցիչն իմանում ենք հետևեալ հարցերով. ում, ինչ, ինչին, ումից, ինչից, ումով, ինչով։

Այն երկրորդական անդամները, որոնք նոյնպէս վերաբերում են ստորոգեալին և ցոյց են տալիս գործողութեան

զանազան հանդամանքները, կոչում են պարագայի բառեր. զորը Աւարայր դաշտում կռուում էր անձնուիրութեամբ. որտեղ էր կռուում, Աւարայր դաշտում. ինչպէս էր կռուում, անձնուիրութեամբ: Կարող ենք աւելացնել. երբ էր կռուում, 451 թուին, ինչու էր կռուում, հայրենի կրօնի համար. սրանք բոլորը պարագայի կամ հանդամանքի բառեր են. դաշտում՝ ցոյց է տալիս գործողութեան տեղը, անձնուիրութեամբ, ցոյց է տալիս ձևը կամ եղանակը, 451-ին ցոյց է տալիս ժամանակը, կրօնի համար ցոյց է տալիս նպատակը:

Ուրեմն պարագայի բառերը ցոյց են տալիս գործողութեան ժամանակը, տեղը, ձևը, չափը, նպատակը: Նրանք պատասխանում են հետևեալ հարցերին. երբ, որտեղ, ինչպէս, ինչքան, ինչու:

Բացի գլխաւոր ու երկրորդական առարկաներից, նախադասութեան մէջ լինում են դէպքեր. երբ դիմում կամ կանչում ենք. օր. Հայը մեր երկնաւոր, հայը ամեն մարդն, դու մեզ ամէն օր տաս հաղար բարի: Ծիծեռնակ, ծիծեռնակ, դու զարնան սիրուն թռչնակ: Սրանք բոլորը դիմումն են ցոյց տալիս և առում են կոչական հրամ:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Երբ նախադասութիւնը բաղկացած է միայն ենթակայից և ստորոգեալից, կոչում է հատառօտ նախադասութիւն օր. Վարդանը մեռաւ. հաւը խօսեցաւ. օրը բացուեցաւ:

Երբ նախադասութեան մէջ կան նաև երկրորդական անդամներ, կոչում է ընդարձակ նախադասութիւն. օր. գիւղացին վարում է արտը. Վարդանն իր բաջերի հետ ընկաւ Աւարայր դաշտում:

Կան նախադասութիւններ, որ մի միտք են յայտնում, կան և այնպիսիները, որ մի քանի միտք են յայտնում. օր. Արամը քաջ էր. սա մի նախադասութիւն է և մի միտք է պարունակում: Արամը, որ քաջ էր, յաղթեց ասորի Նիւբարին. սա նոյնպէս մի նախադասութիւն է, բայց պարունակում է երկու միտք:

Այն նախադասութիւնը, որ մի միտք է պարունակում, կոչում է պարզ, իսկ նա որ երկու կամ աւելի միտք է պարունակում, կոչում է բաղադրեալ. «լուսնը» մի պարզ նախադասութիւն է. «ամպերը եկան, ծածկեցին լուսին», մի բաղադրեալ նախադասութիւն է:

Բաղադրեալ նախադասութեան մէջ մի միտքը լինում է գլխաւոր, իսկ միւսները երկրորդական, դրանից կախում ունեցող. օր. «Արամն յաղթեց ասորի Նիւբարին»—գլխաւոր է, «որ քաջ էր», երկրորդական:

Մտքի համառօտութեան համար, շատ անգամ, միևնոյն ենթական միացնում է մի քանի ստորոգեալ և կամ, միևնոյն ստորոգեալն ունենում է մի քանի ենթակայ. այդպիսի նախադասութիւնները կոչում են միաւորեալ. օր. Գամառ-Քաֆիյան բանաստեղծ էր. Գ.-Քաֆիյան ուսուցիչ էր. Գ.-Ք. հեղինակ էր,—կարճ կ'ասենք Գ.-Քաֆիյան ուսուցիչ, բանաստեղծ և հեղինակ էր: Նալբանդեանը հայ բանաստեղծ էր, Գուրեանը հայ բանաստեղծ էր, Ալիշանը հայ բանաստեղծ էր. Նալբանդեանը, Գուրեանը և Ալիշանը հայ բանաստեղծներ էին:

Երբեմն նախադասութեան միտքը պարզելու համար մէջ են բերում այլ նախադասութիւններ, որոնք կարևոր չեն և կարող են բաց թողնել, առանց մտքին վնասելու. այդպիսի նախադասութիւնները կոչում են միջնակեալ. «ինչպէս երևում է, Վասակն ուրացել էր սրանից».—

«Պատմում են, որ նա դատաճանից հայերի միջանուլթեանը»։ «Շատ էլ ասեն, էշն ինչ գիտէ նուշն ինչ է»։

Երբ պատմելիս մենք մէջ ենք բերում մի երրորդ անձի խօսքերը, դա կոչւում է յաւելեալ նախադասութիւն և դրւում է չակերտների մէջ. Յիսուսն ասում էր, «Տէր, նեերիր, որովհետև չգիտեն ինչ են անում»։

Բոլոր նախադասութիւններն ուրեմն բաժանւում են հինգ մասի.

Պարզ { Համառօտ / Ընդարձակ }

Բաղադրեալ { Գլխաւոր / Երկրորդական }

Միջանկեալ

Միաւորեալ

Յաւելեալ։

ԿԷՏԱԳՐՈՒԹԻՒՆ

Խօսքի զանազան մասերը միմեանցից բաժանելու համար գործ են ածւում նշաններ, որոնք կէտեր են կոչւում. դրանք են...

1) Բուլմ (՝)
2) Ստորակէտ (,)
3) Միջակէտ (.)
4) Վերջակէտ (։)
5) Հեշտ (՞)
6) Երկար (՜)
7) Հարցական (՞)
8) Ապավարց (՞)
9) Չակերտ » «
10) Փակագիծ ( )
11) Բազմակէտ ...
12) Միութեան գիծ —
13) Բաժանման գիծ -

Երբ նախադասութեան մէջ մի բան բաց է թողած կամ յաջորդ բառը չի վերաբերում նախորդին՝ դրւում է բուլմ նախորդի վրայ. օր. «Ծոյլն արժանի է պատժի, իսկ ջանասէրը՝ պարգևի»։ «Բաժակները լի էր գինով, գրպանները՝ փողով. սրտերն՝ ուրախութեամբ»։

Երբ նախադասութեան մի որև է անդամը, ստորոգեալ, բայ կամ լրացուցիչ կրկնւում է, բաժանւում է միւսներից ստորակէտով. սար, ձոր, բար և անտառ կանաչել էին։ Զուներ կերաւ, խմեց, ընեց։

Երկու կամ աւելի նախադասութիւններ, որ մօտիկ կապ ունին, նոյնպէս բաժանւում են ստորակէտով. «Ծառը ծաղկեց, ծիծառն երգեց, գարունը ժպտացրեց բնութիւնը կենդանացաւ»։ Որտեղ կամ՝, ու, և, շաղակապ կայ, այնտեղ ստորակէտ չի դրւում, օր. Վարդանն ու Վահանը զօրավարներ էին; գիտուն կամ ուսեալ՝ հաւասար են օրէնքի առաջ։

Միջանկեալ նախադասութիւնը կամ խօսքը ստորակէտով է բաժանւում գլխաւոր նախադասութիւնից: Կոչական բառերը միշտ բաժանւում են ստորակէտով թէ նախորդ և թէ յետնորդ բառերից. «Ծիծեռնակ, ծիծեռնակ, դու գարնան սիրուն թռչնակ»:

Միջակէտ գրւում է յաւելեալ նախադասութիւնների առաջը. «Հայրն ասաց որդոց. սիրելիք, աշխատեցէք, որ մարդ դառնար»: Յաղթութիւնից յետոյ Կեսար մի այսպիսի նամակ գրեց. «եկայ, տեսայ, յաղթեցի»:

Վերջակէտ գրւում է այնտեղ, ուր միտքը վերջանում է:

Շեշտը դնում ենք կոչական և հրամայական բառերի վրայ. «Ասասւած, պահիր զաւակներիս»: «Արամ, գնա՛ և գտանիր սովորի»:

Ապաթարց դնում ենք բաց թողած տառի տեղ. չը ունիմ=չ'ունիմ. կը գնամ=կ'գնամ:

Ձայները դնում ենք օտարից բերած բառերի առաջն ու վերջը. «Հայրիկ», ասաց գուսանը հօրը,—«Կապայտ երկնքի վրայ»...:

2. ԲԱՌ, ՎԱՆԿ, ՀՆՉԻՒՆ

Եթէ վերցնենք մի որև է միտք, օր. *աշակերտը սովորում է դասը*, և բաժանենք, կտոր-կտոր անենք, կ'տեսնենք որ նա երեք մասերից է բաղկացած. *աշակերտը, դասը, ու սովորում է*, որոնք առանձնակի մի միտք չեն յայտնում, բայց ամէն մինը մի նշանակութիւն ունի: Խօսքի այդ մասերը, որոնք առանձին վերցրած մի գաղափար են յայտնում կամ մի նշանակութիւն ունին, կոչում են *բառեր*. հաց, շուն, պանիր, բար, գրիչ, կարդալ, գրել...

Բառերն էլ, լինում են կարճ կամ երկար. *ու, ու,*

վանդակաւոր, աշակերտ, մ'ազ, ուսումնարան, ուստի միտեսակ չեն հնչում կամ արտաբերւում:

Վ Ա Ն Կ

Բառի այն մասը, որ հնչւում է մի անգամից, կոչւում է *վանկ*. օր. *վա-ճա-ռա-կան, ու-սում-նա-բան. ուստի* և այն բառը, որ մի վանկ ունի կոչւում է *միավանկ*. *մազ*, հաց, տուր, բեր, միրգ, երգ: Իսկ այն բառը որ ունի երկու կամ աւելի վանկ, կոչւում է *բազմավանկ*. սեղան, թմանաք, մատիտ, թանարման:

ՀՆՉԻՒՆ, ՏԱՌ ԿԱՄ ԳԻՐ

Վանկն էլ հնչելիս կարելի է ուղղակի չափ երկարացնել, երգել, հաաաց, օ՜օ՜գ, է...չ. և այդ ժամանակ ջակ-ջակ լսում ենք առանձին ձայներ, որոնք կոչւում են *հնչիւններ*: Երբ հնչիւնը գրւում ենք թղթի վրայ, նրա նշանը կոչւում է *գիր* կամ *տառ*:

Վանկը երգելիս հնչիւններից մի բանիսը երկար են հնչւում, երգւում են. օր. ա՜, ի, օ, ու և այլն... դրանք կոչւում են *ձայնաւոր* և մինը հատ են. ա, ե, է, ը, ի, ո, օ, ու, իւ: Այլ հնչիւններ արտասանւում են միանգամից և չեն երգւում, անհար է նրանց ձայնը երկարել. օր. բ, գ, շ, ջ, խ, հ, և այլն. դրանք կոչւում են *բաղաձայն*:

Հայերէն գրերն են, ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, ւ, փ, ք, և, օ, ֆ:

Բացի դրանից, ո և ւ, միանալով տալիս են *ու*, *ի* և *ւ*, միանալով տալիս են *իւ*, *ո* և *յ*=*ոյ*, *ա* և *յ*=*այ*:

Այս հնչիւններն էլ, նայելով իրանց հնչման եղանակին,

բաժանում են մի բանի տեսակի։ Կան որ հնչում են լեզուի միջոցով և կոչում են.

Լեզուային. օր. ռ, ր, դ, տ, լ. շրթունքի միջոցով հնչողը կոչում է

Շրթնային. բ, պ, փ, մ, ն։

Առամնային. ժ, շ, զ, չ, ջ, ծ, ց, ձ։

Կոկորդային, խ, գ, հ։

Քմային. գ, կ, ք։

Հնչման եղանակին նայելով, ամենից հեշտ են հնչում և գուրեկան են ձայնաւորները, ապա լեզուային և շրթնային հնչիւնները։ Ամենից դժուար են հնչում և անդուրեկան են առամնային և կոկորդային հնչիւնները։ Ուստի դժուար է հնչելը. բժիշկ, Միքիչ, խնձոր, բմբիծաղ, բժշկութիւն. ընդհակառակը, հեշտ է, հաւ, նա, բարի, առաքինի, մարգարէ. առհասարակ այն բառերը, որոնց մէջ ամեն մի բաղաձայնին յաջորդում է մի ձայնաւոր։

Եթէ բառը երկար է և գրելիս կարիք կայ կէսն անցկացնել միւս տողը, բառը պիտի բաժանենք վանկերի և թողնենք կամ հեռացնենք վանկերից մի կամ մի բանիսը. օր. վար-ժա-պետ, թա-գա-ւոր. չի կարելի կիսել վ-արժապետ, կամ վարժ-ապետ։

ՊԱՐԶ, ԲԱՐԴ և ԱԾԱՆՑԵԱԼ ԲԱՌԵՐ

Բառերը իրանց նշանակութեան համեմատ լինում են երեք տեսակ, պարզ բարդ և ածանցեալ։

Երբ բառը մի պարզ գաղափար է յայտնում և չունի որևէ մասնիկ, կոչում է *պարզ* օր. մարդ, հոգի, բաղդ, շուն և այլն։

Երբ այդպիսի բառերի վրայ աւելանում է որևէ մասնիկ. դա կոչում է *ածանցեալ.* ամարդ, մարդ-կային, շնա-կան, ղժ-գոյն, ան-հոգի, ան-բաղդ, բաղդ-աւոր։

Երբեմն երկու պարզ բառեր միանում և արտայայտում են մի նոր գաղափար, դրանք կոչում են *բաղդ* բառեր. բաղաք-ա-վարի, կառ-ա-վար, ոեղան-ա-տուն, տան-ուտէր, Վարդ-աշէն, հիւր-ընկալ, հոգե-շահ։

Այն տառերը, որ կապում են մի բառը միւսի հետ բարդուելիս կամ ածանցուելիս, կոչում են *յոգակապ* և են. ~~*ա, և, ու։*~~ Երբեմն բառերը բարդւում են առանց յոգակապի, որ աւելի լաւ է, օր. մարդ-սրտ, մատն-քաշ, արագ-ընթաց, սուտ-մուտ, գունդ-ա-գունդ և գունդ-գունդ, խմբ-երգ, բանբեր, բանս-արկու, բան-թող, հանդ-մէջ. հայթմուխ, ջր-կիր, փոր-կապ։

ԽՕՍՔԻ ՄԱՍԵՐԸ ԿԱՄ ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻ

Խօսքի մասերը բառերն են, որ այլ կերպ կոչում են *մասունք բանի։* Բառերն իրանց բովանդակութեանը նայելով, մի բանի տեսակ են լինում, օրինակ, կան, որ ցոյց են տալիս մի առարկայի անուն, քար, փայտ, երկինք, գետին, հաց. կան, որ ցոյց են տալիս գործողութիւն. կերաւ, խմեց, գրեց, վազում է, նայում է և այլն... և կամ յատկութիւն. սուրբ մարդ, մաքուր թուղթ, սիրուն գետ և այլն։

Բանի կամ խօսքի մասերը տասն են։

ա. Գոյական անուն
բ. Ածական անուն
գ. Թուական անուն
դ. Դերանուն
ե. Բայ
զ. ~~Դերբայ~~
է. Մակբայ
ը. Հոգեկապ
թ. Միջարկ կամ ձայնարկ։

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Ամէն ինչ որ կայ, կոչւում է առարկայ։ Առարկաները լինում են նիւթական կամ վերացական, հնչաւոր կամ անհնչ։

Նիւթական կոչւում է այն առարկան, որ մենք կարող ենք չոշափել. քար, փայտ, հաց, գինի։

Վերացական կոչւում է այն առարկան, որ չոշափել չենք կարող, այլ իմանում ենք մտքով. Աստուած, հոգի, հրեշտակ, բարութիւն, չարութիւն։

Հնչաւոր կոչւում է այն առարկան, որ կենդանի է և հնչում է. մարդ, ոչխար, ձի, կով։

Անհնչ կոչւում է այն առարկան, որ կենդանի չէ և չի կարող հնչել. ջուր, գիրք, մատիտ։

Ամէն մի առարկայի անուն կոչւում է գոյական անուն. գիրք, թուղթ, թանաք։

Գոյական անունները լինում են երեք տեսակ. յատուկ հասարակ և հաւաքական։

Երբ առարկան մէկ հատ է, նրա անունը կոչւում է *յատուկ*. Մասիս, Թիֆլիս, Կուր, Վարդան, Թորոս։ Յատուկ անունները գրւում են մեծ տառով։

Երբ միևնոյն անունը շատ առարկաների է պատկանում, կոչւում է *հասարակ*. գիրք, մատիտ, մարդ, ծառ, անասուն։

Երբ բազմաթիւ միատեսակ առարկաներ խմբովին մի անուն ունին՝ դա կոչւում է *հաւաքական անուն*. օր. անտառ, զօրք, ջոկ, ալիւր, ջուր, երամ։

ԹԻՒ

Երբ առարկան մէկ հատ է, ասում ենք եզակի թիւ. գիրք, գրիչ... Երբ առարկայի թիւը շատ է, ասում ենք

յոգնակի թիւ, (շատ) գրքեր, գրիչներ, մատիտներ։

Յոգնակին կազմում ենք եզակի թուից վրան աւելացնելով *եր*, կամ *ներ*. *եր*, *ներ* մասնիկը կոչւում է *յոգնակերտ*։

Եր աւելացնում ենք միավանկ բառերի վերջը. օր. տէր-եր, մայր-եր, բոյր-եր, սար-եր։

Յոգնակի դառնալիս միավանկ բառերի մէջ *ի* կամ *ու* ձայնաւորը կորչում է. սիրտ, գիրք, շուն.—սրտեր, գրքեր, շներ։

Ներ, աւելացնում ենք բազմավանկ անունների վերջը. օր. մատիտ-ներ, գրիչ-ներ, գրպիր-ներ, աշակերտ-ներ։ Բազմավանկ բառերի վերջը եղած *յ*, տառը, յոգնակիում կորչում է. քահանայ.—քահանաներ, առարկայ.—առարկաներ։

Բացառաբար մի քանի բառեր յոգնակի այլ վերջաւորութիւն ունին. Տիկնայք, կանայք, մարդիկ, որդիք։

Ս Ե Ռ

Սեռը երեք է. *արական*.—տղամարդ, եզ, խոյ։ *Իգական*. կին, աղջիկ, հարս, կով, հաւ.—Իգականը կազմւում է նաև *ուհի* մասնիկով, երբ աւելացնում ենք առարկայի վրայ. վարժ-ուհի, թագ-ուհի, դերասան-ուհի։

Անհնչ առարկաները սեռ չունին և կոչւում են *չէզոք*։

ՀՈԼՈՎ—ՀՈԼՈՎՈՒՄ

Անունները շատ անգամ փոփոխում են իրանց վերջաւորութիւնը. օր. աշակերտը, աշակերտից, աշակերտով,

աշակերտներից, աշակերտները և այլն... անուան վերջաւորութեան այդպիսի փոփոխուիլը, կոչւում է հոլովումն, իսկ ամեն մի փոփոխութիւնը առանձին կոչւում է հոլով:

Հայերէնը եօթ հոլով ունի:

1) Ուղղական, որ ցոյց է տալիս բառի սկիզբը. եթէ առարկան շնչաւոր է, պատասխանում է ո՞վ հարցին. իսկ եթէ անշունչ է, ինչ հարցրին.—Նախադասութեան մէջ ենթակայ է, երբեմն էլ էական բայերի հետ ստորոգեալ:— Ծիծեռնակը բուն էր շինում. էլ չխօսեց Արաքսը. Աշոտը Հայոց թագաւորը էր, Ներսէսը կաթուղիկոս....

2) Հայցական. երբ առարկան ենթարկւում է մի գործողութեան, հայցական հոլով է. շունը կերաւ հաց. աշակերտը գրում է գիր. որսորդը գնաց դաշտ: Պատասխանում է. ո՞ւմ, ինչ և ո՞ւր հարցերին:—Նախադասութեան մէջ բուն լրացեալ է: Երբ առարկան անշունչ է, նման է ուղղականին, երբ շնչաւոր է և որոշեալ, նման է տրականին:

3) Սեռականը. ցոյց է տալիս թէ առարկան ումն է պատկանում և պատասխանում է ո՞ւմ, ինչի. վարդի թփեր թող բանեն... գրքի թուղթը պատռած է: Աշակերտի մատիտը կորաւ:

Նախադասութեան մէջ որոշող բառ է, որ կոչւում է յատկացուցիչ.

4) Տրական. ցոյց է տալիս թէ մի առարկայ ո՞ւմն ենք տալիս, ինչին կամ ումն ենք ուղարկում կամ մօտեցնում: Հարցերն են. ո՞ւմ, ինչի, ո՞ւր ո՞րտեղ: Վարժապետը դաս տուաւ աշակերտին. տան կտուրին թռչուն է երգում. փողոցով անցնելիս՝ ծառի դիպայ. մնարդու հանդիպեցայ. Մայիսին բացւում է վարդը, Ապրիլին կապոյտ մանուշակ:

Տրականը նման է սեռականին: Երկրորդ լրացուցիչ է. կամ տեղն ու ժամանակը ցոյց տուող պարագայի բառ:

5) Բացառականը ցոյց է տալիս թէ մի բան ինչից, ումնից, կամ ո՞րտեղից է հեռանում: Հայրը հեռացաւ տանից. գրքից մի թուղթ է պակաս. երկնքից անձրև է գալիս:—Նախադասութեան մէջ երկրորդական, իսկ կրաւորական բայերի մօտ գլխաւոր լրացուցիչ է. երբեմն էլ տեղ ցոյց տուող պարագայի բառ:

6) Գործիականը ցոյց է տալիս գործողութիւնը ո՞ւմ և ինչ բանի միջոցով, ո՞ւր և ո՞րտեղ ո՞ւմնով. ի՞նչով, որտեղով, ո՞ւր է կատարւում: Նախադասութեան մէջ երկրորդ լրացեալն է կամ տեղը, ժամանակը, ձևն ու ուղղութիւնը ցոյց տուող պարագայ. օր. փայտը կոտրում են կացնով, կտրում են սղոցով. փողոցով անց ու դարձ են անում մարդիկ: «Մայր Արարատի ափերով բայլամոլոր գնում եմ»: Ձամբու երկարութեամբ պատ է քաշած. պատի ողղութեամբ ծառեր են տնկած: Սիրով և համբերութեամբ լսեցէք:

7) Ներգոյականը ցոյց է տալիս գործողութեան կատարուելու տեղը. հարցն է՝—ո՞րտեղ: Տեղ ցոյց տուող պարագայի բառ է: Պարտիզում թռչուն է երգում. գրքում սիրուն պատմութիւն կայ: Տանը նստած են մարդիկ:

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

Գոյական անունները երեք հոլովում ունին, որ իմանում ենք եզակի սեռականի վերջին ձայնաւորից:

Այդ ձայնաւորները երեք են. I ի. II ու. III ա կամ եա. օր. I. քար-ի, II. մատան-ու, III. ձկ-ա-ն, տր-եա-ն:

Այս հոլովումներն իսկապէս դանազանւում են միայն

1004 Ե 4464

եզակի սեռականում և մասամբ բացառականում։ Մնացեալ հոլովների վերջաւորումները միատեսակ են։

Այն մասնիկը, որ աւելանալով արմատին կազմում է հոլով, կոչւում է հոլովակերպ. օր. հայ-ից, կայն-ով, գլխ-ում. ից, ով, ում, հոլովակերպ են։

ԱՌԱՋԻՆ ՀՈԼՈՎՈՒՄՆ

	Եզակի	Յոգնակի
ՈՒՂՂ. ՀԱՅՑ.	բար	բար-եր
ՍԵՌ. ՏՐ.	բար-ի	բար-եր-ի
ԲԱՅ.	բար-ից	բար-եր-ից
ԳՈՐԾ.	բար-ով	բար-եր-ով
ՆԵՐԳ.	բար-ում	բար-եր-ում։

Այսպէս են հոլովում հայերէն բառերի գրեթէ $^{9}/_{10}$-ը եզակի թւում, իսկ յոգնակի գրեթէ բոլոր բառերը, մի երեք չորս բացառութեամբ, որ կ'տեսնենք բացառութիւնների և զարտուղիների մէջ։

Հոլովելու համար ուրեմն պէտք է ի նկատի ունենանք ուղղականը և սեռականը. ուղղական արմատի վրայ աւելացնում ենք սեռականի հոլովակերպը և ստանում սեռական, որի նման է և տրականը. սրան էլ նման է, երբ առարկան շնչաւոր է և որոշ՝ հայցականը։

Սեռականին երբ աւելացնենք ց, դառնում է բացառական. գործիական ստանում ենք երբ ուղղական արմատին աւելացնում ենք ով հոլովակերպը։

Ներգոյականը դուրս է գալիս նոյնպէս ուղղականից աւելացնելով ում՝ հոլովակերպը։

Միևնոյն այս հոլովակերպները երբ աւելացնում ենք արմատի և յոգնակերպի վրայ, ստանում ենք յոգնակի համապատասխան հոլովները։

ԵՐԿՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

	Եզակի	Յոգնակի
ՈՒՂՂ. Հ.	մատան-ի	մատանի-ներ
Ս. Տ.	մատան-ու	մատանի-ներ-ի
Բ.	մատան-ուց	մատանի-ներ-ից
Գ.	մատան-ով	մատանի-ներ-ով
Ն.	մատան-ում	մատանի-ներ-ում։

Այսպէս են հոլովում ի վերջացող բառերը։ Միավանկ բառերում ի-ն չի կորչում. օր. թի, ձի, թիու, ձիու։

Այսպէս են հոլովում Աստուած, մարդ. (վերջինս յոգնակի այլ կերպ է հոլովւում) և բառերի անորոշ դերբայը. ուտել—ուտելու, գրել—գրելու, կարդալ—ու և այլն։

ԵՐԿՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

	Եզակի	Յոգնակի
1) ՈՒՂ. Հ.	ձուկ	ձկ-ներ
ՍԵՌ. Տ.	ձկան	ձկն-եր-ի
ԲԱՑ.	ձկն-ից	ձկն-եր-ից
ԳՈՐԾ.	ձկն-ով	ձկն-եր-ով
ՆԵՐԳ.	ձկն-ում	ձկն-եր-ում

Եզակի	Յոգնակի
2) Լաւութիւն	—ներ
լաւութեան	—ներ-ի
լաւութիւն-ից	—ներ-ից
լաւութիւն-ով[1]	—ներ-ով
լաւութիւն-ում	—ներ-ում:

Այսպէս են հոլովւում բոլոր ութիւն, ում, ումն (ուսում, ուսուցումն) վերջացող բառերը:

Բացառութիւն. Յարութիւն և Համբարձում յատուկ անունները հոլովւում են *երկրորդ* հոլովմամբ:

ԹԵՐԱԿԱՆՈՆ ՀՈԼՈՎՄՈՒՆՔ

Երեք կանոնաւոր հոլովումից դուրս, հայերէնը ունի 3 հատ էլ թերականոն հոլովում. Ա. ձայնաւոր է *օ. Բ. ո. Գ. ու, ա.* մայր,—մօր, բոյր—բրոջ. տարի—տարուայ. յոգնակի թւում սրանք նման են կանոնաւոր հոլովման. տարբերութիւնը միայն եզակի թւումն է, դրա համար էլ նրանք կոչւում են *թերականոն:*

[1] Ճատ անգամ այս հոլովը վերջանում է եարմ, որ սեռականի նման առնուած է գրաբարից, լաւութեամբ, բարութեամբ, չարութեամբ, որովհետև սա աւելի կարճ է, քան վերջինը:

ԱԶԳԱԿՑՈՒԹԻՒՆ ՅՈՅՑ ՏՈՒՈՂ ԲԱՌԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

Ա.

	Եզակի	Յոգնակի
ՈՒ.	մայր	մայրեր
Ս. Տ. Հ.	մօր	մայր-եր-ի
Բ.	մօրից	մայր-եր-ից
Գ.	մօրով	մայր-եր-ով
Ն.	մօր մէջ	մայր-եր-ի մէջ:

Այսպէս են հոլովւում հայր, եղբայր, մայր և սրանից դուրս եկած բարդ բառերը. առնամայր, հօրեղբայր, կնքահայր և այլն...

Բ.

Եզակի	Յոգնակի
բոյր	բոյր-եր
բրոջ	բոյր-եր-ի
բրոջից	բոյր-եր-ից
բրոջով	բոյր-եր-ով
բրոջ մէջ	բոյր-եր-ի մէջ:

Այսպէս են հոլովւում կին, տէր, ընկեր, աներ, տալ, և սրանց բարդութիւնները. տիկին, հօրաքոյր, տան-տիկին և այլն...:

Գ.

Ժամանակ ցոյց տուող բառերի մի մասը կանոնաւոր հոլովումից դուրս, հոլովւում է նաև այլ կերպ. ա. սե-

ռականի վրայ վերցնում է մի ա (յ)։

ՈՒՂ. Հ.	տարի	ամառ
Ս. Տ.	տար-ու-այ	ամառ-ու-այ
Բ.	տար-ու-ան-ից	ամառ-ու-ան-ից

Այսպէս են հոլովւում ամիս, շաբաթ, ձմեռ, և այլն...

ԱՆԿԱՆՈՆ ՀՈԼՈՎՈՒՈՂ ԲԱՌԵՐ

Կին և մարդ, յոգնակի հոլովւում են կանայք, մարդիկ, կանանց, մարդկանց, կանանցից, մարդկանցից։

Աստուած և սէր, Աստուծոյ և սիրոյ, Աստուծով և սիրով, Աստուծուց սիրուց. կայսր, դուսար—կայսեր, դուսեր, կայսրից, դուսերից։ Ծնողք, որդիք, երեխայք, տղայք, ծնողաց, որդոց, երեխայոց, տղայոց։

Այսպէս են հոլովւում նաև մի բանի ազգերի անունները. հայոց, ռուսաց, յունաց, հրէից, Մամիկոնեանք—Մամիկոնեանց, Բագրատունիք—Բագրատունեաց։

Հոլովման ժամանակ է դառնում է ի. էշ-իշու, սէր-սիրոյ, հանդէս-հանդիսի, պարտէզ-պարտիզի։

ՈՐՈՇՄԱՆ ՅՕԳ

Երբեմն անունների առաջը կամ յետը աւելանում է մի յօղ, և ընդհանուր նշանակութիւնը մասնաւորում է. օրինակ ես կերայ խնձոր, նշանակում է ես կերայ մի պըտուղ, որ առհասարակ խնձոր է կոչւում և յայտնի չէ որ խնձորը և քանի՞ խնձոր կերայ։ Եթէ ասեմ ես կերայ քո

խնձորը, ապա յայտնի է դառնում և որոշւում է իմ կերածը, որ քո տուածն էր. և կամ եթէ ասեմ. ես կերայ մի խնձոր, թէպէտ անորոշ, բայց դարձեալ մասնաւորում է խնձորը դաղափարը։ Մի կամ մէկ, կոչւում է անորոշ յօղ, իսկ ը կամ ն որոշեալ։

Երբ բառը վերջանում է բաղաձայնով, որոշեալ յօղը, լինում է ը. քարը, փայտը, ծառը, իսկ երբ ձայնաւորով, լինում է ն, քանի որ ձայնաւորի մօտ ը չի կարող հնչուել. օր. այգին, ձին, մատանին և այլն...

Երբ հետեւեալ բառը ձայնաւոր է, որոշեալ յօղը դառնում է ն, մարդն-ասա, որ հայն ասեն և քնեն. արևն-ընկաւ բարձր սարին։

Երբ առարկան յայտնի է և ծանօթ, այն ժամանակ է դրւում որոշեալ յօղ, անծանօթ առարկան որոշեալ յօղ չի կարող վերցնել։

Երբ առարկայի ուղղական հոլովը որոշ է, ապա բոլոր հոլովներն էլ վերցնում են որոշեալ յօղ. բայի սեռականից, եզակի թէ յոգնակի։

ՈՐՈՇԵԱԼ ՀՈԼՈՎՈՒՄՆ

	Եզակի	Յոգնակի
ՈՒ. Հ.	հայ-ը	հայերը
Ս.	հայ-ի	հայերի
Տ.	հայ-ի-ն	հայերի-ն
Բ.	հայ-ից-ը	հայերից-ը
Գ.	հայ-ով-ը	հայերով-ը
Ն.	հայ-ում-ը	հայերում-ը։

ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐԻ ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՂԻՒՍԱԿ

	Եզակի			Յոգնակի
ՈՒՂ. Հ.	I	II	III	եր. ներ
ՍԵՌ. ՏՐ.	ի,	ու,	նուն, ին	» » ի
ԲԱՅ.	ի-ց,	ուց,	ան, (եան)	» » ից
ԳՈՐԾ.	ով		ան, (եամբ)	» » ով
ՆԵՐԳ.	ում			» » ում.

ՈՐՈՇԵԱԼ ՅՕԳՈՎ

	Եզակի	Յոգնակի
ՈՒՂ.	ըն, Ն.	երը, ները.
ՍԵՌ.	ի, ու, ան (եան)	» » ի
ՏՐ. **	ին, ուն, անը, (եանը)	» » ին
ԲԱՅ.	ից, ուց,	» » ից
ԳՈՐԾ.	ովը.	» » ովը
ՆԵՐԳ.	ում—ը.	» » ումը

ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Կան բառեր, որոնք ցոյց են տալիս առարկաների որպիսութիւնը կամ յատկութիւնը. օր. *կարմիր խնձոր, անուշ տանձ, շաբ կամ բաբի մարդ, քարէ տուն, փայտէ սեղան*: Դրանք կոչւում են *ածական անուն* և պատասխանում են. *ո՞րպիսի, ի՞նչպիսի* հարցերին:

**) Հայցականը, երբ առարկան անշունչ է նման է ուղղականին, երբ շնչաւոր է, նման է տրականին:

Եթէ ածականը ցոյց է առարկայի բնական որպիսութիւնը (լաւ, վատ, մեծ փոքր) անկախ ուրիշ որեւ առարկայից, դա կոչւում է *որակի ածական*: Իսկ եթէ առարկայի որպիսութիւնը կախումն ունի մի ուրիշ առարկայից, կոչւում է *յարաբերական*. օր. *փայտէ սեղան*: Այստեղ սեղանի յատկութիւնը կապ ունի *փայտ* բարկայի հետ, *ոսկէ մատանի* (ոսկի և մատանի) *քարէ տուն* (քար և տուն): *Որակն* կարող է մի առարկայի մէջ *շատ* կամ *քիչ, մեծ* կամ *փոքր* չափով լինել, օր. *սեւ, աւելի սեւ* և *ամենասեւ թանաք. կարմիր, աւելի կարմիր* և *ամենակարմիր խնձոր*: Սրանք կոչւում են ածականի համեմատութեան աստիճաններ և երեք են:

Ա. Երբ ածականը ցոյց է տալիս մի յատկութիւն առանց որոշելու աւելին կամ պակասը, կոչւում է *դրական աստիճան*. *ոսկեայ, կարմիր, լաւ, վատ*:

Բ. Եթէ մի՝ մի յատկութիւնն աւելի է քան մի քանիսինը՝ կոչւում է *բաղդատական աստիճան*. *աւելի սև, աւելի վատ, լաւագոյն, վատթարագոյն*:

Գ. Իսկ եթէ մի առարկայի որպիսութիւնը գերազանցում է մնացեալ բոլոր առարկաներին, դա կոչւում է *գերբաղդատական աստիճան*. *ամենակարմիր, ամենալաւ, ամենասև, ամենավատ* և այլն: Գերադրական աստիճանը արտայայտւում է նաև *ամենից, բոլորից, շատ չափազանց բառերով, չափազանց լաւ, ամենից վատ, չափազանց սև*:

Յարաբերական ածականը չունի համեմատութեան աստիճաններ, որովհետև չի կարելի ասել *աւելի փայտէ սեղան, ամենաոսկի ժամացոյց*:

Ածական անունը երբ գոյականի հետ է, չի հոլովւում կամ փոփոխւում. օր. *առը մարդ, առը մարդու, առը մարդուց, առը մարդիկ, առը մարդկանց*: Նրա ինչ հոլովներ

լով կամ թիւ լինելն իմանում ենք հարեան գոյականից. սակայն երբ գոյականը չկայ, ածականը հոլովում է գոյականների պէս։

	Եզակի	Յոգնակի
Ոն. Հ.—	վատ-(ը)	վատեր (ը)
Ս.—	վատի	վատերի
Տ.—	վատի-(ն)	վատերի-(ն)
Բ.—	վատից-(ը)	վատերից-(ը)
Գ.—	վատով-(ը)	վատերով-(ը)
Ն.—	վատում-(ը)	վատերում-(ը)

ԹՈՒԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Թուական անունը ցոյց է տալիս առարկաների քանակը կամ կարգը. օր. հինգ, վեց, եօթ, քանակական են. եօթներորդ, ութերորդ, իններորդ, ցոյց են տալիս դասը, ուստի կոչւում են դասական։

Առաջինը պատասխանում է քանի՞ իսկ երկրորդը, քանիերորդ հարցերին։

Քանակը ցոյց տուող թուականներին եթէ աւելացնենք որդ (երկ-որդ, եր-որդ, չոր-որդ կամ երորդ (հինգ-երորդ, վեց-երորդ) մասնիկը, ստանում ենք դասական թուական։ Բացառութիւն է առաջին բառը։

Քանակի թուականներին են վերաբերում նոյնպէս մասնական թուականները, կէս, քառորդ, մէկ չորրորդ, վեց-եօթերորդ ($^{6}/_{7}$) տասը տասներհինգերորդ ($^{10}/_{15}$) և այլն։

Քանակի մէջ կարգ ցոյց տուող թուերը կարգացւում են, միա-ւոր, տասն-ա-ւոր, հարիւրաւոր, հազարաւոր...

Թուական անունը միշտ գրւում է գոյականից առաջ և չի հոլովւում։—Թուական անուան հետ գոյականը սովորաբար եզակի է գրւում. հինգ աշակերտ, տասը մատեան, քսան գրիչ։

Թուական անունները երբ առանց գոյականի են, հոլովւում են. չորս-չորսի, չորսից, չորսով. վեցերորդ, վեցերորդի, վեցերորդից, վեցերորդով։

Երկու, հոլովուելիս առնում է ս. երկու-սի, երկու-սից, երկու-սով։

Մի առնում է ն. մին-ի, մին-ից մին-ով։

Եօթը և ութը կորցնում են-ը. եօթի, ութի, եօթից, ութից, եօթով, ութով։

Ինը և տասը, առնում են-ն ինի, տասնի, ինից տասնից ինով, տասնով։

ԴԵՐԱՆՈՒՆ

Գոյականը կամ ածականը չը կրկնելու համար գործ ենք ածում նրանց տեղը մի բառ, որ կոչւում է դերանուն օր. «իմ ազգակից գիժ Քուռ, թէև այրի ինձ նման»։ «Երբ տեսնես դու նորան ինձնից չատ բարև տուր». իմ, ինձ, դու, նորան, դերանուններ են։

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Դերանունները ութ տեսակ են.

1. Անձնական, որ անձի ով լինելն է ցոյց տալիս. ես, դու, նա, ինքը, մենք, դուք, նրանք, իրանք։

2. Ցուցական, երբ դերանունը ցոյց է տալիս մի ա-

բոլոր առարկայ, սա, դա, նա։ Ցուցականը միշտ երրորդ դէմքն է ցոյց տալիս, միայն որոշում է դիրքը, սա՝ ցոյց է տալիս մօտիկը, դա՝ մերձաւորը, իսկ նա՝ հեռուն։ Սոյն, դոյն, նոյն, այս, այդ, այն, նոյնպէս ցուցական են, միայն ածական և չեն հոլովւում, որովհետև առանձին չեն գործածւում։

3. Հարցական են կոչւում այն դերանունները, որոնցով հարցնում ենք. ո՞վ, ի՞նչ, ո՞ր։ Ո՞րպիսի, ի՞նչպիսի, հարցական ածական դերանուններ են. ի՞նչպիսի գիրք—լաւ գիրք, ո՞րպիսի մարդ—լաւ մարդ։

4. Յարաբերական դերանունը ցոյց է տալիս յարաբերութիւնը, որ։

5. Քանակականը ցոյց է տալիս քանակը. որքան, որչափ, նոյնքան, նոյնչափ, այսքան այսչափ։

6. Ստացականը ցոյց է տալիս առարկայի ում պատկանիլը. իմ, քո, իւր, մեր, ձեր, իրանց։

7. Անորոշ, ոմն, ոմանք, ոչոք, ոչինչ, միւս, ուրիշ, մի քանի։

8. Որոշեալ. իւրաքանչիւր, բոլոր, ամեն, ամենայն, բոլորեքեան, ամեն մէկը։

Դերանունը որովհետև փոխարինում է անուան, վերցնում է անուան թիւը, հոլովը և սեռը. բացի դրանից նա ցոյց է տալիս դէմքն ու երբեմն էլ դիրքը։ Դէմքը երեք է. առաջին, ով որ խօսում է. ես, ինքս։ Երկրորդ, ում հետ որ խօսում է. դու, ինքդ։ Երրորդ, նա, ինքը, որի մասին խօսում է։

Դիրքը նոյնպէս երեք է. մօտիկ սա, այս, սոյն։

Մերձաւորը, դա, այդ, դոյն և հեռուն. նա, այն, նոյն։

Սրանք բոլորը երրորդ դէմք ունին։

ՍՏԱՑԱԿԱՆ ԿԱՄ ԴԻՄՈՐՈՂ ՅՕԳ

Ստացական դերանունների տեղ, որ ցոյց է տալիս թէ առարկան ում է պատկանում, մենք ունինք երեք տառեր, որ դուրս են եկել այս, այդ, այն դերանուններից և են. ս, դ, ն, դրանք կոչւում են դիմորոշ կամ ստացական յօգ. օր. փոխանակ ասելու իմ գիրքը, ասում ենք գիրքս, քո մատիտը=մատիտդ, նրա փայտը=փայտը (ն). ս. առաջին դէմքի համար է, դ=երկրորդն, իսկ ն=երրորդ։

Այս յօգը ուղղականից անցնում է և միւս հոլովներին, օր. գիրքս, գրքիս, գրքիցս, գրքովս, գրքերս, գրքերիս, գրքերիցս, և այլն...

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

Դերանունների մէջ հայցական հոլովը նման է Տրական-ին

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

	Եզակի	Յոգնակի
ՈՒ.	ես—դու	մենք—դուք
Ս.	իմ—քո	մեր—ձեր
Հ. Տ.	ինձ—քեզ	մեզ—ձեզ
Բ.	ինձանից—քեզանից[1])	մեզանից—ձեզանից
Գ.	ինձանով—քեզանով	մեզանով—ձեզանով
Ն.	ինձանում—քեզանում	մեզանում—ձեզանում:

Երբեմն գործ է ածւում աւելի կարճ. ինձնից, ինձնով, ինձնում, քեզնից, քեզնով:

Անձնական դերանունը շատ անգամ աւելի շեշտելու և կարևորութիւն տալու համար, գործ է ածւում ինքը դերանուան հետ. ես-ինքս ասացի, դու-ինքդ կատարեցիր. նա ինքը հրամայեց: Երբեմն դերանունն ուղղակի կրկնւում է. *ես ու ես*, ինքն-իրան, ինքն-իրանից, ինքն-իրանով. քեզ ու քեզ, ձեզ ու ձեզ, մեզ ու մեզ. խօսում էինք ու մտածում:

---

[1]) Այն աև. յօդը, որ տեսանք անկանոն հոլովման մէջ, որտեղ երբեմն կը-հատւում է դառնալով ն. քեզ-ն-ից, քեզ-ն-ով, քեզ-ն-ում, ձեզ-ն-ից, ձեզ-ն-ով:

ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

	Եզակի	Յոգնակի	
ՈՒ.	սա	սրանք—սորանք	(սորա)
Ս.	սրա—սորա	սրանց—սորանց	(սոցա)
Հ. Տ.	սրան—սորան	սրանց—սորանց	(սոցա)
Բ.	սրանից—սորանից	սրանցից—սորանցից	(սոցանից)
Գ.	սրանով—սորանով	սրանցով—սորանցով	(սոցանով)
Ն.	սրանում—սորանում	սրանցում—սորանցում	(սոցանում)

Այսպէս են հոլովւում դա և նա ցուցականները:

ՍՏԱՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

Ստացական դերանունները ածականի պէս եթէ գոյականի հետ են, չեն հոլովւում, իսկ եթէ առանձին են, հոլովւում են սա հոլովմամբ, յօդերով կամ առանց յօդերի:

	Եզակի
ՈՒ.	իմ—քոնը
Ս.	իմի—քոնի
Հ. Տ.	իմին—քոնին
Բ.	իմից—քոնից
Գ.	իմով—քոնով
Ն.	իմում—քոնում

Յոգնակի		
իմերը	(իմոնները—քոնոնը)	քոները
իմերի	(իմոնց—քոնոնց)	քոների
իմերին	(իմոնց—քոնոնց)	քոներին
իմերից	(իմոնցից—քոնոնցից)	քոներից
իմերով	(իմոնցով—քոնոնցով)	քոներով
իմերում	(իմոնցում—քոնոնցում)	քոներում:

	Եզակի	Յոգնակի
ՈՒ.	մեր — ձեր	մերոնք — ձերոնք
Ս.	մերի — ձերի	մերոնց — ձերոնց
Հ. Տ.	մերին — ձերին	մերոնց — ձերոնց
Բ.	մերինից — ձերինից	մերոնցից — ձերոնցից
Գ.	մերինով — ձերինով	մերոնցով — ձերոնցով
Ն.	մերինում — ձերինում	մերոնցում — ձերոնցում:

Այսպէս են հոլովւում սարանը, գարանը:

ՀԱՐՑԱԿԱՆ

	Եզակի	Յոգնակի
ՈՒ.	ում — ինչ	ումքեր — ինչեր
Ս.	ումի — ինչի	ինչերի
Տ.	ումի — ինչի	ինչերի
Ն.	ում — ինչ	ինչեր
Բ.	ումից — ինչից	ինչերից
Գ.	ումով — ինչով	ինչերով
Ն.	ումնում — ինչում	ինչերում:

ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ

Դերանունը *որ* հոլովւում է այսպէս.

	Եզակի	Յոգնակի
ՈՒ.	որը	որոնք
Ս.	որի	որոնց
Տ. Հ.	որի (ն)	որոնց
Բ.	որից (ը)	որոնցից
Գ.	որով (ը)	որոնցով
Ն.	որում (ը)	որոնցում:

Անորոշ դերանուններից *ոչ-ոք, ոչինչ* յոգնակի չունին և հոլովւում են *ա* հոլովմամբ. *ոչոք, ոչոքի, ոչոքից, ոչինչ, ոչինչի, ոչինչից... Ոմն*—եզակի չի հոլովւում, իսկ յոգնակի հոլովւում է. *ոմանք, ոմանց, ոմանցից...:*

Մի քանի, ընդունելով *ա* հոլովւում է. *մի քանիսի, մի քանիսից, մի քանիսով...* յոգնակի ունի:

Միւս, ուրիշ, ամեն, իւրաքանչիւր, հոլովւում են *ա* հոլովմամբ, միայն վերջինը յոգնակի չունի:

Իրար, մէկզմէկ, հոլովւում են *ը* հոլովման պէս. *իրարու, մէկզմէկու, իրարուց, մէկզմէկուց, իրարով, մէկզմէկով:*

Ցնական դերանուններից, *այսպիսի, այդպիսի,* եզակի չեն հոլովւում, իսկ յոգնակի *ա* հոլովման պէս. *այսպիսիների, այդպիսիներից:*

ԲԱՅ

Բայը ցոյց է տալիս առարկայի գործողութիւնը կամ դրութիւնը. *ես ուտում եմ* հաց. *սա մի գործողութիւն է: Ես քնած եմ, սա մի դրութիւն է:*

Երբ գործողութիւնը գլխաւոր առարկայից անցնում է երկրորդականի վրայ, այդպիսին կոչւում է *ներգործող բայ,* կամ *ներգործական. օր. ուտելու գործողութիւնն ինձանից անցնում է հացի վրայ. երկրորդական առարկան այդ դէպքում լինում է հայցական հոլովով բուն լրացուցիչ: Աշակերտը գրում է գիր, խմում է ջուր:*

Երբ՝ ընդհակառակը, գործողութիւնը անցնում է դէպի գլխաւոր առարկան, բառը կոչւում է *կրաւորական. վայրը կորուեց սպոյով: Գեղը կազմւում է առուներից.*

նամակը զրուեց իմ ձեռքով։ Կրաւորական բայի բուն լրացուցիչը լինում է բացառական կամ գործիական հոլով։

Այն բայը, որ ցոյց է տալիս առարկայի գրութիւնը կամ այնպիսի գործողութիւն, որ չի անցնում ուրիշին, այլ մնում է գործող առարկայի մէջ, կոչւում է չեզոք. երեխան խաղում է, մարդն ուրախ է, կինը ծիծաղում է։

Գործողութեան այս երեք տեսակը կոչւում է սեռ. հայերէն բայերն ունին ուրեմն երեք սեռ՝ ներգործական, կրաւորական և չեզոք։

Կարդա՛, կարդում եմ, կարդացինք, պիտի կարդայի. թէ որ կարդանք։

Դիտելով այս գործողութիւնները, մենք տեսնում ենք, որ նրանց կատարողը կամ մէկն է և կամ շատ. ուրեմն, բայն ունի, 1) թիւ, եզակի և յոգնակի. օր. գրում եմ, գրում ենք. կարդաց, կարդացին. 2) գործողութիւնը կատարուած է զանազան ժամանակում՝, ուրեմն բայն ունի ժամանակ, որ երեք է. ա. Ներկայ, որ ցոյց է տալիս՝ թէ գործողութիւնը կատարւում է հիմա, գրում եմ, երգում ենք. բ. անցեալ, որ ցոյց է տալիս թէ գործողութիւնը կատարուել է, բայց կատարուելուց յետոյ վերջացել է արդեօք, թէ կիսատ է մնացել, վաղ է կատարուել թէ նորերս, այդ ցոյց է տալիս անցեալի զանազան ժամանակները, որ լինում է անցեալ՝

Անկատար. գրում էի, կարդում էիր։
Կատարեալ. գրեցի, կարդացիր։
Վաղակատար. գրել եմ, կարդացել եմ։
Գերակատար. գրած եմ եղել, կարդացած եմ եղել։
Ցարակատար. գրած էի եղել, կարդացած էի եղել։
Պայմանական. կ'գրէի, կ'կարդայի. և կամ,
գ. Երբ մարդ մտադիր է մի գործ կատարելու, եթէ

յարմարութիւն ունենայ, ուտի գործողութիւնը լինում է.
Ստորադասական. եթէ որ գրէի. եթէ որ կարդայի։
Ապառանի, որ ցոյց է տալիս՝ թէ գործողութիւնը յետոյ պիտի կատարուի, և երկու տեսակ է.
I. Սահմանական. կ'գրեմ, պիտի կարդամ։
II. Ստորադաս. եթէ գրեմ, որ կարդամ։

3) Դ Է Մ Բ

Բայն ունի երեք դէմք. առաջին, որ խօսում է. երկրորդ, որի հետ խօսում է. երրորդ, որի մասին խօսում է. ես ուտում եմ, դու ուտում ես, նա ուտում է։

4) Ե Ղ Ա Ն Ա Կ

Գործողութեան կատարուելու կերպը կոչւում է եղանակ և հինգ հատ է.

I. Անորոշ, որ բայի սկիզբն է ցոյց տալիս և վերջանում է ալ. (կարդալ, խաղալ), անալ (հասկանալ, իմանալ), ել, (գր-ել, ասել)։

Բացառաբար մի քանի բայեր անորոշ եղանակում վերջանում են իլ, յոգնիլ, նստիլ, ապրիլ։

II. Սահմանական կամ որոշեալ եղանակ, որ անորոշի հակառակ սահմանում է գործողութեան ժամանակը, թիւը և դէմքը, պատմելով թէ ով է կատարողը և երբ է կատարուում. ես կարդում եմ, վարժապետը պատմում էր, թռչունը թռաւ։

III. Հրամայական եղանակը ցոյց է տալիս. որ գործողութիւնը հրամանով է կատարուում, կարդա՛, որ մարդ դառնաս։

IV. *Պայմանականը* ցոյց է տալիս, որ գործողութիւնը պայմանով է կատարւում. օր. պիտի ուտէի, կ'ուտէի, եթէ կերակուրը լաւ լինէր:

V. *Ստորադասականը* ցոյց է տալիս, որ գործողութիւնը կասկածանքի տակ է, կարող է կատարուել կամ ոչ.—թէ որ ուտեմ, թէ որ ասեմ, ինձ պատժիր. թէ որ ասած լինէի, ապատուած կ'լինէի:

Այսպիսով բայը ունի երեք սեռ, երեք ժամանակ, հինգ եղանակ, երկու թիւ, երեք դէմք:

ԳԵՐԲԱՅ

Բայը չ'կրկնելու համար նրա տեղ գործ ենք ածում բառեր, որ կոչւում են դերբայ. օր. նա, որ գրում է, պիտի և կարդայ=գրողը պիտի կարդայ. ով որ կարդում է, նա խելօք է=կարդացողը խելօք է:

Դերբայը չորս տեսակ է:

I. *Անորոշ*, որ բայի սկիզբն է ցոյց տալիս, որ առանց որոշելու թիւ, դէմք կամ ժամանակ:

Անորոշ գերբայն հոլովւում է *ը* հոլովման պէս, կարդալ, կարդալու, կարդալուց, կարդալով.—լոգնակի չ'ունի:

II, *Ներկայ*, անորոշի վրայ աւելանալով *իս* կամ *ով* մասնիկը, դառնում է *ներկայ*. ուտել-*իս*, խաղալ-*իս*, ուտել-*ով*, գրել-*ով*, խաղալ-*ով*. և կամ արմատի վրայ աւելանում է *ող* և դառնում է *ներկայ*, գր-*ող*, կարդաց-*ող*, վիճ-*ող*: Սա հոլովւում է Ա. հոլովման պէս:

III. *Անցեալ դերբայը* կազմւում է երբ բայի արմատին աւելացնում ենք *ած*, *ել*, գր-*ած*, կարդաց-*ած*. կարդաց-*ել*, վերջացր-*ած*, վերջացր-*ել*: Սրա օգնութեամբ են

կազմւում բայի բարդ ժամանակները, վաղակատար, յարակատար, պայմանական և ստորադասական:

Հոլովւում է Ա. հոլովման պէս, գրածի, գրածից, գրածով, գրածներ, գրածների և այլն:

IV. Ապառնի գերբայը կազմւում է երբ անորոշին աւելացնում ենք *ու*. պատմել-*ու*, գրել-*ու*, կարդալ-*ու*:

Սրա օգնութեամբ է կազմւում ապառնի հասատատականը, կարդալու եմ, ապառնի պայմանականը, *կարդալու էի*: Ստորադասականի ապառնին. *թէ որ կարդալու լինիմ և անկատարը, թէ որ կարդալու լինէի:*

ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

Բայի փոփոխումը եղանակով, ժամանակով, թուով ու դէմքով, կոչւում է խոնարհում:

Բայերն ունին երեք խոնարհում, որ իմանամ ենք անորոշ դերբայից եւ եզակի կատարեալ առաջին դէմքից. օրին

1) գր-*ել*, 2) կարդ-*ալ*, 3) ուրախան-*ալ*.
գրե-*ցի*, կարդա-*ցի*, ուրախացայ:

Կան բայեր, որոնք բոլոր ժամանակները չունին, դրանք կոչւում են պակասաւոր և լրանում են ուրիշի օգնութեամբ, օր. եմ և կամ բայերն ունին միայն սահմանականի ներկան և անկատարը, նրանք լրանում են լինել բայի օգնութեամբ, այս վերջինն էլ լրանում է եղանիկ բայով:

ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

Եմ կամ լինել բայերը կոչւում են էական, երբ ցոյց

են տալիս առարկայի էությունը, կամ լինելը. ես եմ, դու կաս, նա լինում է. նոյն բառերը օգնում են միւս բայերին խոնարհուելիս և այդ դէպքում կոչւում են օժանդակ կամ օգնական։

ՕԺԱՆԴԱԿ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄՆ

Սահմանական եղանակ

Ներկայ ժամանակ

Եզակի. եմ, ես, է. (կամ, կաս, կայ).
Յոգնակի. ենք, էք, են, (կանք, կաք, կան)։

Անկատար

Եզակի. էի, էիր, էր. (կայի, կայիր, կար).
Յոգնակի. էինք, էիր, էին. (կայինք, կայիք, կային)։

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ ժամանակ

Եզակի. լինում եմ, լինում ես, լինում է.
Յոգնակի. » ենք. » էք, » են։

Անկատար

Եզակի. լինում էի, լինում էիր, լինում էր.
Յոգնակի. » էինք, » էիք, » էին։

Կատարյալ

Եզակի. եղայ, եղար. եղաւ.
Յոգնակի. եղանք եղաք, եղան։

Ապառնի

Եզակի. կը, պիտի, լինիմ, լինիս, լինի,
Յոգնակի. կը, պիտի, լինինք, լինիք, լինին։

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ

Եզակի. կը. պիտի, լինէի, լինէիր, լինէր.
Յոգնակի. » » լինէինք, լինէիք, լինէին։

Անցեալ

Եզակի. եղած կ'լինէի, եղած կ'լինէիր, եղած կ'լինէր.
Յոգնակի. » » լինէինք. » » լինէիք, » » լինէին։

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ

Եզակի. թէ, որ, լինիմ, լինիս, լինի.
Յոգնակի. » » լինինք, լինիք. լինին։

Անկատար

Եզակի. թէ որ, լինէի լինէիր, լինէր.
Յոգնակի. » » լինէինք, լինէիք, լինէին։

Հ ա մ ա յ ն ա կ ա ն

Եղիր, եղէք,
Թող լինի, թող լինին։

Դ ե ր ք ա յ

Անորոշ—լինել.
Ներկայ—եղող, լինելիս, լինելով.
Որոշեալ—եղած, լինող, եղել.
Ապառնի—լինելու.

ԱՌԱՋԻՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Գ ր-ե լ, գ ր-ե ց ի

Ս ա հ մ ա ն ա կ ա ն ե ղ ա ն ա կ

Ն ե ր կ ա յ

Ցպակի. գրում եմ, գրում ես, գրում է.
Ցոգնակի. » ենք, » էք, » են։

Ա ն կ ա տ ա ր

Ցպակի. գրում էի, գրում էիր, գրում էր.
Ցոգնակի. » էինք, » էիք, » էին։

Կ ա տ ա ր ե ա լ

Ցպակի. գրեցի, գրեցիր, գրեց.
Ցոգնակի. գրեցինք, գրեցիք, գրեցին.

Վաղակատար. ես գրել եմ, դու գրել ես, նա գրել է.
մենք » ենք, դուք » էք, նրանք » են.
Գերակատար. ես » էի, դու » էիր, նա » էր.
մենք » էինք, դուք » էիք, նրանք » էին.

Յարակատար. ես, դու, նա. — գրած եմ եղել, գրած ես եղել, գրած է եղել։
մենք դուք, նրանք — գրած ենք եղել, գրած էք եղել, գրած են եղել։

Ապառնի կը, ապիտի գրեմ, գրես, գրէ.
» » գրենք, գրէք, գրեն։

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Կ Ա Ն

Ն ե ր կ ա յ

Ցպակի. կը գրէի, կը գրէիր, կը գրէր.
Ցոգնակի. կը գրէինք, կը գրէիք, կը գրէին։

Ա ն կ ա տ ա ր

Ցպակի. գրած կ'լինէի, գրած կը լինէիր, գրած կ'լինէր.
Ցոգնակի. » կ'լինէինք, » կը լինէիք, » կ'լինէին։

Ս ա հ մ ա ն ա կ ա ն

Ներկայ. թէ որ գրեմ, գրես, գրէ, գրենք, գրէք, գրեն.
Անկատար. թէ որ գրէի, գրէիր, գրէր, գրէինք, գրէիք, գրէին։

թէ ոչ գրած լինիմ, լինիս, լինի, լինինք, լինիք, լինին.
թէ որ գրած լինէի, լինէիր, լինէր, լինէինք, լինէիք, լինէին։

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

գրիր, գրեցէք.
թող գրի, թող գրեն։

ԳԵՐԲԱՅ

Անորոշ. գրել.
Ներկայ. գրող, գրելիս. գրելով.
Անցեալ. գրած.
Ապառնի. գրելու։

ԵՐԿՈՐԴ ԽՈՆԱՐՀՈՒՄ

կարդ-ալ կարդա-ացի

Սահմանական եղանակ

Ներկայ. ես կարդում եմ, դու կարդում ես, նա կարդում է.
մենք » ենք, դուք » էք, նրանք » են։
Անկատար. ես » էի, դու » էիր, նա » էր.
մենք » էինք, դուք » էիք, նրանք » էին.
Կատարեալ. ես կարդացի, դու կարդացիր. նա կարդաց.
մենք կարդացինք, դուք կարդացիք, նրանք կարդացին։

Վաղակատար. ես կարդացել եմ. դու կարդացել ես, նա կարդացել է.
մենք կարդացել ենք, դուք կարդացել էք, նրանք կարդացել են։
Դերբակատար. ես կարդացել էի, դու կարդացել էիր, նա կարդացել էր.
մենք կարդացել էինք. դուք կարդացել էիք, նրանք կարդացել էին։

Ցարակատար. ես, դու, նա.	կարդացած եմ եղել, կարդացած ես եղել, կարդացած է եղել.
մենք, դուք, նրանք.	կարդացած ենք եղել, կարդացած էք եղել, կարդացած են եղել։

Ապառնի. կը, պիտի կարդամ, կը, պիտի կարդաս, կը պիտի կարդայ.
կը, պիտի կարդանք, կը, պիտի կարդաք, կը, պիտի կարդան։

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ

Ներկայ. կը, պիտի կարդայի, կը, պիտի, կարդայիր, կը, պիտի կարդար.
» » կարդայինք, » » կարդայիք, կը, պիտի կարդային։
Անկատար. կարդացած կ'լինէի, կարդացած կ'լինէիր, կարդացած կ'լինէր։
կարդացած կ'լինէինք, կարդացած կ'լինէիք, կարդացած կ'լինէին։

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ

Ներկայ. թէ որ կարդամ, թէ որ կարդաս, թէ որ կարդայ.
» » կարդանք, » » կարդաք, » » կարդան.
Անկատար» « կարդայի, » » կարդայիր, » » կարդար.
» » » ինք, » » » իր, » » » յին։

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

կարդա՛, կարդացէ՛ք,
թող կարդա՛, թող կարդան։

ԴԵՐԲԱՅ

Անորոշ. կարդալ.
Ներկայ. կարդացող. կարդալիս, կարդալով.
Անցեալ. կարդացած.
Ապառնի. կարդալու։

ԵՐՐՈՐԴ ԽՈՆԱՐՀՈՒՄ (յօղաւոր)

ուրախ-անալ, ուրախ-ացայ

Սահմանական եղանակ

Ներկայ. ես ուրախանում եմ, դու ուրախանում ես, նա ուրախանում է.
մենք ուրախանում ենք, դուք ուրախանում էք, նրանք ուրախանում են։
Անկատար. ես ուրախանում էի, դու ուրախանում էիր, նա ուրախանում էր.
մենք ուրախանում էինք, դուք ուրախանում էիք, նրանք ուրախանում էին։
Կատարեալ. ես ուրախացայ, դու ուրախացար, նա ուրախացաւ.
մենք ուրախացանք, դուք ուրախացաք, նրանք ուրախացան։
Վաղակատար. ես ուրախացել եմ, դու ուրախացել ես, նա ուրախացել է.
մենք ուրախացել ենք, դուք ուրախացել էք, նրանք ուրախացել են։
Դերակատար. ես ուրախացել էի, դու ուրախացել էիր, նա ուրախացել էր.
մենք ուրախացել էինք, դուք ուրախացել էիք, նրանք ուրախացել էին։
Յարակատար

Ես	ուրախացած	եմ	եղել,
Դու	»	»	ես	եղել,
Նա	»	»	է	եղել,
Մենք	»	»	ենք	եղել,
Դուք	»	»	էք	եղել,
Նրանք	»	»	են	եղել,

Ապառնի. կը, պիտի ուրախանամ, կը, պիտի ուրախանաս, կը, պիտի ուրախանայ.
» » ուրախանանք, կը, պիտի ուրախանաք, կը, պիտի ուրախանան։

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ

Ներկայ. կը, պիտի ուրախանայի, կը, պիտի ուրախանա-

յիր, կը, պիտի ուրախանար։
կը, պիտի ուրախանայիր, կը, պիտի ուրա-
խանայիր, կը, պիտի ուրախանայինք։

Անկատար. ուրախացած կ'լինէի. ուրախացած կ'լինէիր, ու-
րախացած կ'լինէր, ուրախացած կ'լինէինք, ու-
րախացած կ'լինէիր. ուրախացած կ'լինէին։

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ

Ներկայ. թէ որ ուրախանամ, թէ որ ուրախանաս. թէ որ
ուրախանայ թէ որ ուրախանանք։ թէ որ ու-
րախանաք, թէ որ ուրախանան

Անկատար. թէ որ ուրախանայի, թէ որ ուրախանայիր թէ
որ ուրախանար, թէ որ ուրախանայինք, թէ
որ ուրախայի, թէ որ ուրախանայինք։

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

ուրախացիր, ուրախացէք.
թող ուրախանայ, թող ուրախանան։

ԴԵՐԲԱՅ

Անորոշ. ուրախանալ.
Ներկայ. ուրախացող, ուրախանալիս, ուրախանալով.
Անցեալ. ուրախացած.
Ապառնի. ուրախանալու։

ԲԱՑԱՍԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Բացասաբար խոնարհուելիս, օժանդակ բայն առաջ է
ընկնում և իր վերայ է առնում հը մասնիկը. օրինակ.

չեմ ուրախանում, չես ուրախանում, չի ուրախանում.
չենք ուրախանում, չէք ուրախանում, չեն ուրախանում.
չէի ուրախանում, չէիր ուրախանում, չէր ուրախանում.
չէինք ուրախանում, չէիր ուրախանում, չէին ուրախանում։
չուրախացայ, չուրախացար, չուրախացաւ.
չուրախացանք, չուրախացար, չուրախացան. չեմ ուրախա-
ցել, չէի ուրախացել, ուրախացած չեմ եղել և այլն... և
կամ ուրախացած չեմ, ուրախացած չէի, չեմ եղել ուրա-
խացած, չունիմ ուրախած, ուրախանալու չեմ և այլն։

ԿԲԱԻՈՐ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Բոլոր ներգործական բայերը կրաւորական են դառ-
նում, երբ արմատի և լծորդի մէջ ընդունում են մի ու օր.
գրուել, ջրուել, ծեծուել, բռնուել և այլն...

II և III խոնարհման բայերը կրաւորական են դառ-
նում, կատարեալ երբորդ դէմքից կորցնելով վերջաւորու-
թիւնը ի կամ այ. և առնելով ըստ նախորդ կանոնի ու-
ել. օր. հատկաց-այ, կարդաց-ի, հատկաց-ուել, կարդաց-ուել։

Այսպէս կազմուելուց յետոյ, նրանք խոնարհւում են,
առաջին խոնարհման պէս օրինակ.

գրւում եմ, կարդացւում եմ.
գրւում էի. կարդացւում էի.
գրուեցի, կարդացուեցի.
կը գրուեմ, կը կարդացուեմ.
պիտի գրուէի, պիտի կարդացուէի։

I. ԱՆԿԱՆՈՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Ա Ն Ա Լ

Ներկայ. եզ. անում եմ, անում ես, անում է.
յոգ. անում ենք, անում էք, անում են։

Անկատար. եզ. անում էի, անում էիր, անում էր.
յոգ. անում էինք, անում էիք, անում էին:
Կատարեալ. եզ. արի, արիր, արաւ.
յոգ. արինք, արիք, արին.
Հաղորդական. եզ. արել եմ, արել էի, արած եմ, արած եմ եղել:
Հրամայական. արա, արէք, մի անի, մի անէք:

Այսպէս է խոնարհւում և գնել, գրի, գրիր, գրաւ, գիր, թողնել, թողի, թողիր, թողաւ, թող:

Անել, գնել, թողնել, տալ, բայերը շատ անգամ աւելանալով բայ արմատների վրայ, գործ են ածւում որպէս օժանդակ. բաց-անել, խմաց-անել, վերջ-գնել, ցած-գնել, թողնել-տալ խմաց-տալ, բաց թողնել, կարգացնել-տալ, թողտալ: Երբ այդպիսի բարդումներով նրանք ցոյց են տալիս գործողութեան կատարուիլն ուրիշի ձեռով, կոչւում են անցողական բայեր, օրինակ. խմաց-անել-տալ, վերջաց-ընել-տալ և այլն...

Անել բայն այդպիսի դէպքում շատ անգամ մնում է անկախ. խմաց-անել, բաց-անել, անց-կաց-անել, երբեմն էլ ողուելով, միանում է բայ արմատին. վերջաց-անել, վերջացընել, անցկացընել, յիմարացընել և այլն:

Դրանք խոնարհւում են ինչպէս անել բայը, որից և և դուրս են եկած. օր. խմաց-անել, խմաց եմ անում, խմաց-արա. բաց-անել, բաց եմ անում, բաց-արի, բաց-արա. վերջացընել, վերջացընում եմ, վերջացրի, վերջացրու [1]:

Այսպէս են խոնարհւում բոլոր անցողական բայերը. առանց ողման կամ ողումով. կարգացնել, յիմարացնել, ծիծաղացնել, բուսցնել, գաղարեցնել, հաւատացնել և այլն:

[1]) Գաւառականը պահել է սրա ուղիղ ձևը. վերջացրա, կարգացրա և այլն:

II. ՅՈԴԱԿՈՐՈՅՍ ԲԱՅԵՐ

Մի շարք բայեր կան, որոնք խոնարհուելիս կորցնում են ն կամ շ յոդերը, որոնք կոչւում են յոդակորոյս բայեր. օրինակ.

ընկնել, ընկայ, ընկիր, ընկել, ընկած.
հագնել, հագայ, հագիր, հագել, հագած.
մտնել, մտայ, մտիր, մտել, մտած.
տեսնել, տեսայ, տես, տեսել, տեսած.
բուսնել, բուսայ, բուսիր բուսել, բուսած.
հեծնել, հեծայ, հեծիր, հեծել, հեծած.
մեռնել, մեռայ, մեռիր, մեռել, մեռած.
հասնել, հասայ, հասիր, հասել, հասած.
անցնել, անցայ, անցիր, անցել, անցած.
իջնել, իջայ, իջիր, իջել, իջած.
տանել, տարայ, տար, տարել, տարած.
գտնել, գտայ, գտիր, գտել, գտած.
գուշակել, գուշակայ, գուշակիր. գուշակել, գուշակած.
փախչել, փախայ, փախիր, փախել, փախած.
թռչել, թռայ, թռիր, թռել, թռած.
փլչել, փլայ, փլիր, փլել, փլած.
կորչել, կորայ, կորիր, կորել կորած.
կպչել, կպայ, կպիր, կպել, կպած.
հանդչել, հանդչայ, հանդչիր, հանդչել. հանդչած:

III. ՊԱԿԱՍԱՒՈՐ

Պակասաւոր բայեր կոչւում են նրանք, որ լրանում են ուրիշի արմատներով և կամ բոլորովին չեն լրանում. օր.

Գալ. գալիս եմ, գալիս էի, եկայ, եկ, (արի), եկել եմ, եկող, եկած:

Լայ. լայիս եմ, լայիս էի, լայ-եղայ, լայ եմ եղել, լայ լինող, լայ եղած, լայ լինելու։

Տալ. տալիս եմ, տալիս էի, տուի, (տուիր, տուաւ), տուել եմ, տուող, տուած։

Այսպէս է խոնարհւում տալ բայը։ Լէպէտ նա պակասաւոր չէ։

Ուտել. ուտում եմ, ուտում էի, կերայ. կեր. կերել եմ, ուտող, կերած։

Գալ. եղակի կամ, կաս, կայ, կայի, կայիր, կար— մնացեալ ժամանակները չունի. յոգնակի. կանք, կար, կան, կայինք, կայիք, կային։

Ունենալ. եղ. ունիմ, ունիս, ունի, ունէի, ունէիր, ունէր։

յոգ. ունինք, ունիր, ունին, ունէինք, ունէիր, ունէին։

Դիտենալ. եղ. գիտեմ, գիտես, գիտէ, գիտէի, գիտէիր, գիտէր, իմացայ, իմացար.

յոգ. գիտենք, գիտէք, գիտեն, գիտէինք, գիտէիր, գիտէին, իմացանք, իմացար։

ԴԻՄԱՊԱԿԱՍ ԲԱՅԵՐ

Մի քանի բայեր գործ են ածւում միայն երրորդ դէմքում, առաջին և երկրորդը չունին, դրանք կոչւում են *դիմապակաս բայեր*. պէտք, հարկէ, գուցէ, ամօթէ, 'ի-հարկէ. լուսացաւ, ամպեց, մթնեց. անձրևում է, որոտում է և այլն։

ՄԱԿԲԱՅ

Այն բառը որ ցոյց է տալիս գործողութեան հանգամանքը, կոչւում է մակբայ։

Մակբայները ցոյց են տալիս.

Ա. Ժամանակը. այսօր, երէկ. հերու, վաղուց, հնուց, երբ, այժմ, երբեմն, երէք, յետոյ, միշտ, ընդմիշտ և այլն։

Բ. Տեղը. ո՞րտեղ, ո՞ւր, մօտիկ, հեռու, վերև, ներքև, տակը, վրան. ներսը, դուրսը և այլն։

Գ. Որակը. ինչպէս, այսպէս, այդպէս, այնպէս, սառոտիկ, ուժգին, սիրով։

Դ. Քանակը. ո՞րքան, ինչքան, այնքան, այդքան, նոյնքան, նոյնչափ, բիչ, շատ, սակաւ, հազիւ։

ՆԱԽԱԴԻՐ և ՅԵՏԱԴԻՐ

Այն բառը, որ ցոյց է տալիս առարկաների յարաբերութիւնը կոչւում է *նախադիր*. եթէ գրուած է հոլովառու բառից առաջ կամ *յետադիր*, եթէ գրուած է հոլովառու բառից յետոյ. օր. «ինձ համար չէ գարնան գալը»—«համար», վերաբերում է ինձ-ին գրուած է յետոյ, ուստի յետադրութիւն է։ Առանց բեզ գործը գլուխ չի գայ։ «Առանց» նախադիր է։

Նախադիրներ են. առանց, վէպի, մինչև, բացի։

Յետադիրներ են. հակառակ, համեմատ, մօտ. տակ, վրայ, հետ և այլն։

Որպէսզի յետադիրն ու նախադիրը ջոկենք մակբայից, պիտի տեսնենք, թէ գոյականին է վերաբերում, նախադիր է կամ յետադիր, իսկ եթէ բային է վերաբերում, մակ-բայ. *մօտ* արի—մակբայ է. ինձ *մօտ* խնձոր կայ, յետադիր է։

ՃԱՂԿԱՊ

Այն բառը, որ կապում, միացնում է խօսքեր կամ

նախադասութեան անդամներ, կոչւում են շաղկապ։

Արամն ու աշխէնը խաղում են, իսկ Տիգրանն ու Վահանը կամ խաղում են, կամ պարապում։ Ու, կամ, իսկ, բայց, էլ, եւ, թէ, եթէ, թէպէտ, ուրեմն, սակայն, մանաւանդ, արդեօք, որովհետեւ, կէմ, գոնէ, թէեւ, թէպէտեւ, միայն, բան թէ, նոյն իսկ, զօրինակ և այլն շաղկապներ են։

ՄԻՋԱՐԿ ԿԱՄ ՁԱՅՆԱՐԿ

Այն բացականչումը, որ արտայայտում է մեր զգացմունքն ու կիրքը, վախը կամ ուրախութիւնը, ցաւը կամ խնդումը, կոչւում է միջարկ կամ ձայնարկ. օր. ա՜խ, վա՜խ, ա՜հ, ո՜ւհ, օ՜ֆ, ափսո՜ս, աւա՜ղ, վա՜հ, ա՛յ, հէ՛յ, հա՛, հա՛, ապրե՜ս, կեցցե՜ս, միջարկներ են։

Կան միջարկներ, որ արտայայտում են զանազան աւարկաների ձայներ, թրթրթոկ, շրրթոկ, զընգ-զընգ, ծիւ-ցիւ, միաու, համ-համ և այլն։

Միջարկների գլխին գրւում է երկար (՝) իսկ յետին սարակէտ։

Գ. Ե Ր Ջ

Գ.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A Публичная Библиотека
7/XI. 1922
именна. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Երես			Սխալ	Ուղիղ
9	Ներբ.	3 տող	շաղակապ	շաղկապ
14	վեր.	2 »	վերացիան	վերացական
»	»	10	առտրկան	առարկան
»	»	14	լրնում	լինում
15	»	8	գիրբ	գիրբ
»	»	12	տառբ,	տառբ
17	»	9	տալիս	տալիս թէ
»	»	10	ոբտեղ ումնով	ոբտեղ, ումնով
19	Ներբ.	1	գրելու	գրելու
21	վեր.	8	ատնամայբ	սանամաբ
25	»	6	ռարկայի	առարկայի
»	Ներբ.	8	շատ շափազանց	շատ, շափազանց
26	վեր.	2	հոլովում	հոլովւում
»	»	12	բանական	բանակական
29	»	7	երկրորդն	երկրորդ
30	ծանոթ.		այն ան յոդ	այս ան յոդն է
»	»		որտեղ	որբ
36	Ներբ.	12	որ առանց	առանց

«Ազգային գրադարան»
NL0245800

7547

ՎԱՃԱՌԻՈՒՄ ԵՆ ՆՈՑՆ ՀԵՂԻՆԱԿԻ

1. Պատմական բնութագրություն միջնակարգ դպրոցների համար գին . . . . . 75 կոպ.
2. Հայ հեղինակներ բ. տպ. գին . . . . 1 ռուբ.
3. Զատում լույս կտեսնեն և «Հայ հեղինակների» մասս հատորները։

ԳՊՐՈՑԱԿԱՆ ԲԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԳԻՆՆ Է 25 ԿՈՊ.

Դիմել Թիֆլիս՝ Коммерческое училище, Ванcalifъ և կամ դրատաճառներին։